

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Կիրակի օր, մայիսի 23-ին, ստատուկի սովետնիկ

Ն Ի Կ Օ Լ Ա Յ Ա Ս Լ Ա Ն Օ Վ Ի Զ Ա Թ Ա Բ Է Գ Ե Ա Ն Ի

մասկան քառասունը աւելի, Ձրկիննից Ս. Կարապետ եկեղեցում (Գրիբոեդովսկայա փողոց) կատարվելու է հոգեհանգիստ: Այդ մասին հանգուցեալի եղբայր երգիչ Նաւա- տարմատար Ներսէս Ասլանովիչ Աթաբեկեան յայտնում է ծանօթներին և ազգականներին: Հոգեհանգիստը կը սկսվի առաւօտեան 11¹/₂ ժամին: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ժողովրդական մեծ կարիք.—Ներքին ՏԵ- ՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Դաշնակաւար Սյւրիկինի. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Էմի- լիօ Կաստելեար. Ռուսաց քաղաքականութիւնը Պարսկաստանում. Նամակ Գերմանիայից. Նա- մակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀՅՈԱԳԻՐ- ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԵԾ ԿԱՐԻՔ

Նորանոր փաստեր ապացուցանում են, որ մեր ժողովրդական մասսայի սնունդը օրից օր վատանում է և մատաղ սերունդը ներկայանում է ֆիզիքայէն աւելի թոյլ և ընկճիլով, քան հայրերը և պապերը: Մանաւանդ անմիջեղանակ է լինում աղքատացած ժողովրդի պարտքի չունի այն զանազան կերակ- րանքները, որոնք գտնվում են տափա- րակ ջրաբեր տեղերում: Լեռնային շրջա- նում մեր ժողովրդի գլխաւոր կե- րակուղը հացն էր, մինչդեռ տափարա- կում նա ունի մրգեր և ընդհանրապէս ու կանաչիներ: Հացը, որ առաջ բուսնում էր առատ և բաղաձայն էր մեծ մասամբ ցորե- նից՝ այժմ սկսել է տալ սակաւ հունձ և դուրսը և գալիս փոխել է կոպիտ: Ժողո- վրդը, որ նախկին քիչ պաշար, ստիպված է խնայողութիւն մտնել օրեկան կերած հացի մէջ և բաւականապէս ոչ մի- այն ստոր տեսակի ցորենով, այլ յաճախ փոխարինել նրան գարիով, սիմիդրով:

Մեր առիթ ենք ունեցել արձանագրել մեր ժողովրդի անհրաժեշտ կարիքներին վերաբերեալ այս խոշոր կէտը և ստիպված ենք նորից դարձնել նրա վրա առանձին ուշադրութիւն, հրաւիրելով ձեռնհաս անձանց՝ աջակցելու մեր ժողովրդին, դար- ման անելու այդ դժբաղը և վտանգաւոր դրութեանը: Եթէ շատ տեղ այլ ևս ան- կարելի է դարձնել աւելացնելու գիւ- ղական ժողովրդի ձեռքում եղած հողի քա- նակութիւնը, պէտք է դիմել ուրիշ միջոց- ների և աշխատել կատարելագործութիւն- ների միջոցով նորից հողից դուրս բերել ա- լելի մեծ քանակութեամբ մթերքներ և աւելի բազմաթիւ կերակրանքներ:

Բժշկական և քիմիական հետազոտու- թիւնները ցոյց են տալիս, որ բանջարանոց- ցի նիւթերի և զանազան տեսակ ընդդէմ- ների մէջ կան մեծ քանակութեամբ սնուն- ղարար և օգտաւէտ տարրեր, որոնք կա- ռող էին լրացնել ժողովրդի սնունդը: Յայ- տնի է, որ բանջարանոցների, գետնախնձորի, սիւնուրի, ձակընդդի և ուրիշ նիւթերի ապի եղած հողը աւելի մեծ քանակու- թեամբ մթերքներ և արդիւնաբերում, քան երբ նա պէտք է բուսնի հացահա- տիկներ: Իսկ մեր լեռնային շրջանի շատ տեղեր կարող են ամենաաշուղ և ապահով կերպով աճեցնել բանջարանոցի բոյսերի մեծ մասը և նոյն իսկ զարգացնել մրգա- բուծութիւնը:

Խնդիր լուրջ է և կարեւոր. ժողովրդին մօտ եղած անձանց վրա ծանրանում է մի դժուար, բայց և հաճելի պարտք՝ օգնել աղ- քատականութեանը մոտենալու տեսնութեան մէջ բարեփոխութիւններ, որոնցից ոչ մի- այն կը բարւոքվի նրա սնունդը, այլ և

մեծապէս կը շահվի գիւղատնտեսութիւնը, տալով աւելի արդիւնք: Մեծ դժբաղդու- թիւն կը լինի մեր երկրի համար, եթէ մեր ժողովրդական մասսան կը զննար իր նիւթական ապահովութեան կողմից և կը մաշվի ֆիզիքայէն, որովհետեւ անվերջ զըր- կանքներին կը հետեւի մի քանի ժամանա- կից և բարդացնող ու ժառանգութիւն: Այն նահանգները, ուր վերջին տարիները տեղի ունեցան անբերրիութիւն և սով կամ գոյութիւն ունեն ներկայումս՝ ամե- նալաւ ապացուց են ժողովրդական այն մեծ թշուառութեան և աղէտի, երբ նա ան- կարող է կանոնաւոր կերակրվել, աճել և զարգանալ: Ամեն ջանք պէտք է դրժ դը- նել պահպանելու ժողովրդի նիւթական ապահովութիւնը, առանց որի վտանգված է ժողովրդի գոյութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ռուսահայերի և թիւրքահայերի գրական հարա- ւանդութեան և ուղղութիւնների մասին վերջին տարիներս շատ են խօսել Կ. Պոլսի գրագէտնե- րը: Մենք շատ անգամ ենք առիթ ունեցել ցոյց տալու, թէ այդ ուղղութիւնների մէջ որպիսի ծիծաղելի աստիճաններ կան հասնում աշխա- րհագրական հարեւանաբնութիւնը, նեղորոտ չօղի- նիզմը և մանաւանդ այն, որ «Բա-ի» ու «Զո-ի» տարբերութիւնը ցոյց տալու համար թիւրքահա- յերն աշխատում են լինել սնապարծ երեխա- ներ: Ինչու ուսումնասիրող չեն հաւանում թիւ- րքահայերի գրական գործերը, և ընդհակառակը, թիւրքահայերն էլ չեն սիրում մեր գործերը: Պարզեցնելով գրագէտներն ասում էին, թէ դրա պատճառը լեզուն է և լեզուի կողմից թիւրքա- հայերը կատարեալ իրաւունք ունեն արհամար- անու ուսումնասիրել, քանի որ այս վերջինները առաջինների նման հայկաբան չեն, բերթոյնը չեն: Բայց սա պատճառ չէ: Ռուսահայերի մէջ ընդ չեն լեզուագէտներ, բայց նրանք պարտք են համարում ոչ թէ գրաբարին ոյժ տալ, այլ ժո- ղովրդական լեզուին, մինչդեռ արեւմտեան հա- յերի մէջ հակառակ հոսանք է նկատուում: Խըն- դիրը, ուրեմն, ուղղութիւնների չտրվել է պար- տում: Եւ այդ ուղղութիւնների տեսակետից էլ պէտք է հասկանալ գրական ճաշակների տար- րերութիւնը: Այդ մասին թիւրքահայերը շատ չէին սիրում մտածել. բաւական է որ իրանք հայկաբան են, իսկ մենք, իբրեւ թէ, մուրաց- կաններ ենք: Այժմ ուղղութիւնների հարցը բա- ւական որոշ կերպով դրել է Մասիսը՝ հանդէսը մի յօդուածի մէջ, որ նուիրված է պ. Ա. Ծա- տուրեանի բանաստեղծութիւններին: Վերջին տարիներում մենք առաջին անգամ ենք տես- նում այդպիսի խելօք, լրջամիտ դատողութիւն: Յօդուածագիր Արամ Անտոնեան իրաւացի կեր- պով նկատում է, որ եթէ ուսումնասիրող և թիւր- քահայերը միմեանց չեն հաւանում՝ պատճառը գրական ուղղութիւնն է, այն ազդեցութիւնը, որի տակ գտնվում են երկու գրականութիւնները:

Ռուսահայոց համար բանաստեղծութիւնը գաղափարին մէջ կը կայանայ ընդհանրապէս, մինչդեռ մենք արուեստը կը փնտռենք ամեն բանէ աւելի. այսպէս է նաև գրական միւս բերթ: Ըստ սեռերուն համար պ. Անտոնե- ոտանաւորը կը կազմեն առանց բնաւ արու- եստը աչքի առնել ունենալու. իրենց բովան- դակ ջանքերը բերթուածներուն մէջ ձգտում մը

գաղափար մը դնելուն մէջ միայն կը կայանայ, կը բաւէ որ բան մը ըսած ըլլան և արդէն իսկ բանաստեղծութիւն մը գրած կը համա- րուին:

Սա ուսուց և առհասարակ հիւսիսային գրականութեան ազդեցութեան հետեւնքն է: Իսկ թիւրքահայերը ըստովին սերիշ տեսակ ազդեցութեան արդիւնք են:

Մեր տեղական գրականութիւնը իր արդի վի- ճակին հասած է միմյան ֆրանսական գրակա- նութեան հետեղութեամբ. թէ որչափ կրցած է օգտուիլ այդ հետեղութեան, ատիկա տեղ չի կրնար բռնել այս յօդուածին մէջ. վեր հանելիք կէտս սա է միայն, թէ այդ հետեղ- ութեան ուղղակի պատճառաւ է, որ մենք այսօր այնչափ տեղ կուտանք արուեստին, քանի որ եւրոպական գրականութեան մէջ ֆրանսական գրականութիւնն առաջինն է՝ ուր արուեստը իր կատարելագործութեան հասած ըլլալ, ամենին աւելի իրեն խնամք տարուելուն համար: Այս եկամուտ ազդեցու- թեան տակ, մեր տեղական գրականութիւնը տակաւ արուեստին շուրջ խտանալ սկսած է, կամայ կամայ արուեստը արուեստին հա- մարձի տեսակ մը ձև առնելով, որուն սա- կայն իբր գլխաւոր պատճառներ պէտք է նը- կատել նաև տեղական պայմանները:

Այժմ, ի հարկէ, պարզ է թէ ինչու արեւմ- տեան և արեւելեան հայերը միմեանց չեն հասկա- նում: Արուեստը արուեստի համար ուղղու- թիւնը, շատ ճիշդ է նկատված, մեզ մօտ հա- մակրութիւն չէ գտնուում և հազիւ թէ երբ և իցէ կարողանայ դուրս մղել գաղափարական ուղղու- թիւնը: Հարց կարող է ծագել միայն այն մա- սին, թէ երկու ուղղութիւններից որն է լաւ: Եւ ասա մի շատ դեղեցիկ միջոց որպէս գի թիւր- քահայերն ու ուսումնասիրող կարողանան մի- մեանց համոզել գրական այդ երկու խոշոր ուղ- ղութիւնների օգտակարութեան, կենսականու- թեան վերաբերմամբ: Մենք շատ ուրախ կը լի- նեմք, եթէ Կ. Պոլսի գրագէտների այն շրջա- նը, որ այժմ արժարժում է ֆրանսիական և հիւ- սիսային ուղղութիւնների հարցը գրականութեան և կրթութեան մէջ, չը բաւականանար իր դը- րութիւնը արձանագրելով, իսկ ուղղութեան ա- նունները գտնելով, այլ աշխատէր լուրջ, բազ- մակողմանի ուսումնասիրութիւններով պարզել երկու ուղղութիւնների էութիւնը, նրանց ազ- դեցութիւնը կենսի վրա, նրանց ներկան ու պազգան, թէ ում է պատկանում յաղթանակը, թէ ում է աւելի համապատասխանում գրական հասկացողութիւններին, ժամանակին: Այդ բա- րեխիղճ վերլուծումներից ինքն ըստ ինքեան կը պարզվի թէ որ կողմն է սխալ ճանապարհի վրա—ուսումնասիրող թէ թիւրքահայերը: Մենք մեր կողմից կը նպատակենք այդ աշխատու- թեան, որ, կարծում ենք, շատ մեծ նշանակու- թիւն ունի մեր գրականութեան համար ընդհան- րապէս: Առ այժմ շտապում ենք յայտնել Մա- սիսի յօդուածագիրն, որ նա շատ սխալ ըմբռնո- ղութեամբ գաղափարական ուղղութեան վա- րտուցութիւնը տեսնում է այն անհնրժեք բանաս- տեղծութիւնների կոյտերի մէջ, որոնք վերջին ժամանակներս տպվում են մեր պարբերական հրատարակութիւնների մէջ: Անմեղելի սխալ է կարծել, թէ ով ոտանաւոր է գրում՝ նա բանաս- տեղծ է: Մենք երբեք այդպիսի դժբախտ հաս- կացողութեան մէջ չենք մոլորված. պահանջելով գաղափար՝ մենք պահանջում ենք միևնույն ժա- մանակ և գեղարուեստական ձև: Գաղափարա- կան ուղղութեան մեղք չէ, որ տեղից վեր կա- ցողը ոտանաւոր է թիւրք. այդ մեղք ամբողջա- պէս ծանրացած է այն հանդէսների վրա, որոնք անպատճառ ուղղւում են ոտանաւոր տալ իրանց ընթերցողներին: Յօդուածագիրը, ինչպէս երե- տում է, մոլորված է այն ճշմարտութիւննե- րից, որոնք երևան են գալիս մեզ մօտ այդ բանաստեղծութիւնների առիթով: Բայց այն զգուշիկ յատկութիւնը, որ ունեն իրանց աշխա- տակիցներին գովող և փառաբանող հանդէսները, երբեք ընդադադարութիւն չէ կարող անուանվել, Մեր մէջ շատ կան «պարսասկաններ», բայց ընտրվածները, չնորք ունեցողները շատ քիչ են: Այս ընդհանուր դիտողութիւնները մենք ա- նում ենք՝ որպէս գի մեր պոլսեցի եղբայրա-

կիցները ուղղութիւնների հիմնական և կարեւոր հարցերը չը խառնեն մասնաւոր երևոյթների հետ: Այստեղ մենք չենք խօսում պ. Անտոնեա- նի յիշած բանաստեղծներից և ոչ մէկի մասին: Աւելի կարեւոր հանգամանքը այն է, որ դրված է ուղղութիւնների հարցը: Արեւմտեան այդ հարցն էլ մշակեցէք ամենայն ընդլայնութեամբ, լաւ իմանալով որ թէ դուր և թէ մենք շատ օգուտներ կը քա- դենք դրանից:

ԴՍՇՆԱԿԱՆՍՈՒՄ ՍԼԻՎԻՆՍԿԻ

Հինգշաբթի, ամսիս 20-ին, Թիֆլիսի ժողո- վարանի դահլիճը ծայրի ծայր լինէր էր նուա- զասէր հասարակութեամբ: Բոլորն էլ եկել էին յայտնի երաժշտ դաշնակահար (պիանիստ) Սլիվինսկու հինգերորդ և վերջին կօնցերտը լը- սելու, որը, ինչպէս և առաջինները, այս ան- դամ էլ անցաւ ամենայն արդուլութեամբ: Թիֆ- լիսը վերջին 30 տարին այնպիսի առաջադի- մութիւն է արել երաժշտութեան մէջ, որ թէ անպայման յաճախում է կօնցերտներ և թէ դի- տէ դեհանտը արուեստագէտներին: Նա տեսել է և դեռ չէ մոռանում հռչակաւոր դաշնակա- հարներին,—Սօֆիա Մենտերին, Էսթրադային, Պալմանին, Բելլինսկուին, Ջաուէրին և վեր- չապէս հակա երաժշտ Անտոն Բուքինյուտին. չը պիտի մոռանայ և Սլիվինսկուն:

Սօֆիա Մենտերը միայն է փոթորկալից պիես- ներ նուագելու, ինչպէս Պալմանը ամենա- քնքշող, մեղմ և միջոցական պիեսներում.— երկու հակառակ առաւելութիւններ: Երբ Պալ- մանին հարցրել են, թէ Բուքինյուտին ինչպէս է նուագում—նա պատասխանել է. «Սօֆիա Մեն- տեր և Պալման միասին կը կազմեն մի Բու- քինյուտին, որը պարունակում է իր մէջ երկու առաւելութիւններն է: Նոյնը համարձակ կա- րելի է ասել և Սլիվինսկու մասին. ներկայումս Բուքինյուտինից յետոյ նա առաջին տեղն է բռն- նում: Նրա տեխնիկայի մասին, որը հասցրել է կատարելութեան խօսելու աւելորդ է. նրա հա- մար դժուար և անկարելի ոչինչ չը կայ: Կա- տարելն է գրաւում և դարձնում իր վրա ա- ռանձին ուշադրութիւն: Բէթհօվենի սոնատի «Միսսա բարեսա», «Բացակայութիւն» և «Վերա- դարձ», այս երեք տարբեր մասերը այնքան լաւ արտայայտեց, որ լսողը ուղղակի հեղինա- կի նկարագրած պատկերներն է տեսնում երե- ւակալութեամբ. մանաւանդ «Բացակայութիւն» նուագելիս ցոյց տուց՝ որ թախիճը երաժշ- տութեամբ միայն կարելի է այդքան զօրացնել, որի մէջ պիտան թէ երգում էր և թէ կարծես հառաչում ու ողորում: Մենք հմտութեամբ է գործածում պեղալը (ոտների տեղը), որով ար- բանեակ ձայները (oberton) շատ նպաստաւոր դեր են կատարում,—պիեսան վերջնապէս յե- տոյ էլ՝ կարծես պիանոն ինքն իրան երգում է, այնքան լաւ են լսվում: Իսկ գլխաւոր յատ- կութիւնը Սլիվինսկու կայանում է նրանում, որ նա դաշնակի բաղմամբ մանրաբաղիւ ձայ- ներից ձևացնում է ֆօն և այդ ձայնական ֆո- նի վրա շատ որոշ կերպով ցոյց է տալիս մե- լորդիական պարզ պատկեր, կարծես երկու պիես- նո նուագելիս լինեն, մին՝ բացառիկ մեղմ ձայ- ներով, միւսը՝ վառ գոյներով մեղմ ու լա- պէս էին, օրինակ, Բուքինյուտինի Բարկարօլան և Շուսան-Լիստի ու Զօպէն-Լիստի պիեսները: Այսպէս՝ Սլիվինսկու ամպլուան (ընտրած դերը) ընդոյ՝ մեղորդական է: Բայց նա ցոյց տուց և իր երաժշտական վիճակի ոյժը Մոսկովսկու ճարտարապետ պիեսում, որը նա նուագեց դո- րեղ և փոթորկալից: Սլիվինսկու պէս նուագել սովորեցնելն անկարելի է. սա մի տաղանդ է. գեղարուեստի ուսմանը անցնելու և երաժշ- տական գրականութիւնը ուսումնասիրելուց յե- տոյ՝ խաղը և արտայայտութիւնը արդէն ինքն է ստեղծում ըստ ճաշակի:

Հասարակութեանը օգնություն չափ չը կար. նա միշտ բնի էր կանչում կօնցերտատիւն և վարձատրում ծափահարութիւններով: Գեղե- ցիկ սեռը ծաղիկներ նետելով օլագիւս սարքեց, լեհերի կողմից ստացաւ պարունը մի արձաթեալ

պատկ: Սելվինտին ուսման ընթացքը Վարչա-
վայի կոնսերվատորիան աւարտելուց յետոյ, շա-
բաթական է վիճենաւ և ապա կատարելագործ-
վել է Անտոն Բուրնհայմի մօտ: Արտասահ-
մանեան կոնսերվատորիայ յետոյ այս առաջին
անգամն է, որ Ռուսաստանում արտիստական
չըլան է կատարում: Այստեղից մեր հիւրը
գնում է Կոնսերվատոր տալու Վարչավա և ապա
դարձեալ արտասահման:

Կարա-Մուրզա

ՆՍՐՔԻՆ ԼՈՒՐՍԻ

Կովկասի տնայնագործութեան դար-
գացման խնդիրը մտնում է կազմակերպութեան
չըլանի մէջ: Մտադրութիւն կայ մի յատուկ
խորհուրդ հաստատել, որի հոգածութեան ա-
ռարկան պէտք է լինեն Կովկասի տնայնագոր-
ծութեան վերաբերեալ բոլոր գործերը: Այդ
խորհրդի ծրագիրը մշակել է երկրագործութեան
մինիստրի կովկասեան լիազօր Ե. Մեդվեդով
և ներկայացրել է մինիստրութեան հաստատու-
թեան: Այդ ծրագիրով խորհուրդը պէտք է ունե-
նայ հետեւեալ գործունէութիւնը. 1) հետազոտել
երկրի տնայնագործական արհեստները ներկայ
վիճակը և նրա կարիքները, 2) ծանօթացնել
տնայնագործներին դանադան կատարելագոր-
ծութիւններին հետ, 3) անշակել տնայնագործ-
ներին ձեռք բերելու շահաւէտ պայմաններով
հում նիւթ, գործիքներ և այլն, 4) օգնել պա-
տարատ արդիւնների վաճառահանման, 5) չինել
արհեստանոցներ՝ տնայնագործներին արհեստ
սովորեցնելու համար, 6) հրատարակել ձեռ-
նարկներ տնայնագործութեան մասին, 7) կազ-
մել տնայնագործական ցուցահանդէսներ, մըր-
ցութիւններ և այլն: Խորհուրդը պէտք է կազմ-
ված լինի մասնագէտներից, գիւղատնտեսներից,
վարչական հաստատութիւնների ներկայացու-
ցիներից, երկրագործութեան մինիստրի կովկա-
սեան լիազօրի նախագահութեամբ:

Ստացանք «Բն» ար Պ ու շ կ ի ն ի ժողովա-
ծուն, որ լոյս է ընծայել Թիֆլիսի Հայոց Հրա-
տարակական ընկերութիւնը ընդհանուր հա-
րիրաբանայ յօդուքների առիթով: Դա մի գեղե-
ցիկ հրատարակութիւն է հաստ թղթի վրա,
մաքուր տիպով: Պարտականութիւն է Պուշկինի մանր
ոտանաւորները և «Բարե» Հիւրը պոէման: Ուսա-
նաւորներից 25 խորագրութիւնն պատկանում
է Ալեքսանդր Մատուրեանին և 3-ը Յովհաննէս
Յովհաննիսեանին, իսկ «Բարե» Հիւրը՝ Թարգմանել
է Կոնստանդին Կրասնիկովին: Կիրքը բաղկա-
ցած է 120 փոքրագիր երեսներից, տպւած է
Բագուի Արք տպարանում և արժէ 50 կոպէկ:

ԳԱՆՁԱԿԻՑ մեղ հաղորդում են, որ այս տա-
րի խաղողի բերքը թոյլ է, իսկ արգասու ծա-
ռերինը առատ: Գինին էման է և մեծ քանա-
կութեամբ գինի սպասում է գնորդների: Գինու
վեղործն ծախվում է 1 ր.—1 ր. 20 կոպէկով:

Ստացանք Լ. Խան-Աղեանի «Гидравлическіе
автоматы» բրոշյուր-յայտարարութիւնը, ո-
րին կցված է և հայերէն յաւելում: Մենք ար-
դէն ծանօթացրել էինք մեր ընթերցողներին այդ
նոր գործիքի մասին, որ թոյլ է տալիս ջուր
բարձրացնել գիւղատնտեսական և տնային պի-
տոյքների համար: Այդ գործիքը կարող է պի-
տանի լինել ջրի հարկաւորութիւն ունեցող քա-
ղաքներին, գիւղերին, ագարակներին, ամառա-
նոցներին, գործարաններին, մասնաւոր տներին
ջուր հասցնելու համար, անշուր և ամայի տե-
ղերը, դաշտերը, պարտէզները, բանջարանոց-
ները, այգիները, արտերը, բաժարակի, ընկնելի,
ծխախոտի և այլ ցանքերը ջրելու համար, նը-
ծանապէս ջուր բարձրացնել և գիւղատնտեսա-
կան մեքենաներ բանցնելու համար: Գործիքը
համեմատաբար էման, դիմացկուն է, պարզ և
արդիւնաբեր: Բանում է ինքնաբերաբար առանց
չողու, քամու, ձիու կամ մի որ և է ուրիշ ու-
ժի: Բաւական է դնել այս մեքենան ջրվճենի
կամ վաղող ջրերի մօտ, մի անգամ սարքել,
այնուհետև եւ ինքն իրան անվերջ կը բանի:
Գինը, նայած խողովաների լայնութեան, տա-
տանվում են, սկսած 18 րուրդուց մի դիւմի հա-
մար, մինչև 650 րուրդի տասն դիւմանոց խո-
ղովանի համար: Գործիքը ծախվում է Թիֆլի-
սում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեղ գրում են. «Այս օրերս
Պետերբուրգից մեկնեցին Կովկասում համերգ-
ներ տալու նպատակով երկու հայ երգիչ՝ պ. պ.
Ալեքսանդր Մամաջանեան և Տիգրան Նալբան-
դեան: Առաջինը ունի ուժեղ, դուրեկան բարե-
տօն. պարոնը ահա չորս տարի է որ ուսանում
է տեղիս կայսերական երաժշտական դպրոցում:

և պէտք է ասած, որ արել է բաւական առա-
ջադիւրութիւն: Պ. Նալբանդեանը ունի գեղեցիկ,
փափուկ լիրեական տենոր, լաւ տիրում է իր
ձայնին, դիրութեամբ վերցնում վերին նոտա-
ները: Պարոնը նոյնպէս աչակերտ է կայսերա-
կան երաժշտական դպրոցի: Աշտուրիւն ենք
ցանկանում երիտասարդ երգիչներին. յոտով
ենք որ հայ հասարակութիւնը սիրով կը յաճա-
խէ նրանց համերգները, որով խրախուսած կը
լինի երիտասարդ երգիչներին ապագայում ա-
ւելի սիրով և եռանդով առաջ ընթանալու:

Նորից հրաւիրում ենք հանդուցեալ Բաֆֆի
ժառանգների ուշադրութիւնը այն հանգամանքի
վրա, որ շատ տեղերից դանդաղներ ենք ստա-
նում այն մասին, թէ փող են ուղարկել Բաֆ-
ֆիի գրքերից ձեռք բերելու համար, բայց ոչինչ
չեն ստացել:

ԿԱՐՍԻՑ, մայիսի 17-ից, մեղ գրում են. «Ամսիս
14-ին հասարակութեան խնդիրով տրեկին Սի-
րանոյցը իր ընկերների հետ խաղաց «Բոյ» Թե-
րեզու: Քայր Թերեզույի դերում տրեկին Սիրանոյցը
ցույց տուց մեծ ընդունակութիւն գեր ըմբռնե-
լու և նրան արտայայտելու մէջ: Ներկայացումից
յետ ժողովուրդը խնդրեց երրորդ ներկայացումն
ուսել և նոյն իսկ այդ գիշերը ծախվեց 170
րուրդու չափ տոնակներ, որ չը տեսնված բան
էր Կարսում: 16-ին նշանակված էր «Ճաշ»
պիւէսն. բոլոր տոնակները ծախված էին:
Ցաւելով պէտք է ասել, որ այդ երրորդ ներ-
կայացումը ոչ միայն ցանկալի լաւ տպաւորու-
թիւն չը թողց, այլ և նսեմացրեց նախկինների
տպաւորութիւնը: Նրեք ներկայացումներ տալուց
յետոյ խումբն ուղևորվեց Ալեքսանդրօպոլ: Ցաւա-
րի է, որ առանց կողմիտ շահատրութեան չանցա-
ղերաւանները գործը: Նոյն իսկ տրեկին Սի-
րանոյցը չը կարողացաւ զգալ իր դժգոհու-
թիւնը, երբ մի քանի համակրողներ ներկա-
յայցին նրան մի էմանդին ընծայ (15 րուրդ):
Գուցէ այստեղ սպասում էին 1000-նոց ընծանե-
րի, բայց մոռանում են որ Կարսում նաւթի
ֆոնտաները չը կան: Բացառութեամբ մի քա-
նիստների, խումբն այնքան վատ տպաւորութիւն
թողց մի քանի համակրողների և օժանդակող-
ների վրա, որ նրանք դժուար թէ ուրիշ անգամ
համաձայնվին աջակցել և յանձն առնել այն գո-
հուրթիւնները, որ յանձն էին առել այս ան-
գամ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԷՄԻԼԻՑ ԿԱՍԵԷԼԵԱՐ

Սպանիան մի նոր ահազին կորուստ կրեց:
Մայիսի 12-ին վախճանվեց էմիլիո Կաստէլեար:
Հանդուցեալը ամենամեծ հռետորի հռչակ ունէր
ամբողջ աշխարհում:
Կաստէլեար ծնվեց 1832 թ-ի սեպտեմբերի
3-ին: Պատանեկութիւնից սկսած նա աչքի էր
ընկնում իր աղաւթատութեամբ, և թէպէտ հո-
ղով միշտ հանրապետական էր, բայց նա սկզբ-
ումը Նապոլեոնի կողմն էր: Որպէս Մարիդի
համալսարանի պատմութեան պրոֆէսոր և «De-
mocratia» լրագրի խմբագիր, նա, Նապոլեոնի
իշխանութեան ժամանակ, կասկածի տակ ընկաւ
և կալանաւորվեց: 1866 թ-ին, նա փախաւ
Ֆրանսիա: Միայն 1868 թ-ի յետափոխութեան
շնորհիւ նա կարողացաւ վերադառնալ հայրենիք:
Նրան ողորութեամբ ընդունեցին և կործանե-
րի անդամ ընտրեցին:

Պրիմի օրերում և Ամէլդէյ թագաւորի կարճատև
թագաւորութեան ընթացքում նա մտքի և խօսքի
աղաւթութեան պաշտպան էր: Կարլիստները և ան-
համբերողութեան բարոյգիտները նրանից աւելի
տաղանդաւոր հակառակորդ չունէին: Նրա Ամէ-
լդէյի գահից հրաժարվելուց յետոյ, Սպանիայում
հանրապետութիւն հրատարակվեց, Կաստէլեար
արտաքին գործերի մինիստր դարձաւ: Յետոյ
որպէս գործադիր իշխանութեան գլուխ, դիկտա-
տորական լիազօրութիւնով, նա համոզվեց, որ
իր երազները պէտք է ցնդեն նրան: Հանրա-
պետական կուսակցութեան մէջ տիրող երկպա-
սակութիւնները և թշնամութիւնը նորից բացեցին
Սպանիայի սահմանները Բուրբոնների համար:
1876 թ-ին նա այնու ամենայնիւ վերադարձաւ,
և Բուրբոններն նրան կործանեցին պատգամաւոր
ընտրեց: Կաստէլեար մինչև իր կեանքի վերջը
կուսում էր աղաւթութեան համար և այդ դրոշա-
կին նա հաւատարիմ մնաց մինչև իր կեանքի
վերջը: Պարիզ եղած ժամանակ, Կաստէլեար
Ֆրանսիայէն լքելով մի քանի րոպէս դուրս եկաւ
Թիւրքիայի թշուառ հայերի պաշտպան, և ամե-
նապատկան խօսքով պախարակում էր թիւրքերի
գաղութութիւնները:

Մինչև անգամ նրա բարձրական հակառա-
կորդները նրան Սպանիայի պարծանք էին համա-
րում, և նրա մահը սուգ տալուց երկրի մէջ:

ՌՈՒՍԱՑ ԳԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԱՍՏ-ՏԱՆՈՒՄ

«Times» լրագրի Բերլինի թղթակիցը հեռա-
գրով հաղորդում է մի հետաքրքիր յօդուածի բո-
ւանդակութիւնը Ռուսաց ազդեցութեան ապագայ
զարգացման մասին Պարսկաստանում. այդ յո-
դուածը պատկանում է «Berliner «Tageblatt»

լրագրի թղթակցին:
Հեղինակը ասում է, որ Ռուսաստանը, ինչ-
պէս և ամեն տեղ, ձգտում է Միջին-Ասիայում
զուրս դալ դէպի բաց ծովը: Այժմ Ռուսաստանի
համար Միջերկրական ծովին հասնելը առաջվա-
նից աւելի դժուարացաւ: Նրա ազդեցութիւնը
Բոսֆորի վրա չափազանց պակասեց, իսկ Փոքր-
Ասիայում նա ոչ չունէր կուսելու ուրիշ եւրո-
պական ազդերի դրամագլուխներին, առեւտրական
ծեռնարկութեան և ճարտարութեան դէմ: Հընդ-
կաստանի վրա արշաւելու Պաւլէ և Ալեքսանդր
I կայսրների փայփայած նախագիծերը ժամանա-
կի ընթացքում անիրագործելի դարձան: Բաց
ծովին հասնելու դժուարութեան կողմից Պարս-
կաստանի վրայով ընդած ուղղութիւնը Ռու-
սաստանի համար պէտք է ամենակարգը համա-
րել: Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի օ-
րինակը ապացուցանում է, որ Ռուսաստանը
կարող է Պարսկաստանին ևս բարձրացնել այն
կործանիչ դրութիւնից, որի մէջ նա այժմ գը-
տնվում է: Ռուսաստանը չէ ձգտում տիրապետել
Պարսկաստանը, այլ կամենում է այդ երկրում
ճանապարհների և երկաթուղիների կոնցեսիաներ
ստանալ, ցանկանում է կոնտրոլի իրաւունք ու-
նենալ ֆինանսների մի քանի կետերի վրա և ի-
րաւունք՝ դրաւուն մի քանի նաւահանգիստներ:
Պէտք է յիշել, որ Ռուսաստանը մինչև 1903
թ-ականը բացառական իրաւունք է վայելում իր
veto-ն դնելու ամեն տեսակ կոնցեսիաների վրա
և արգելելու Անգլիային ընդարձակելու իր առե-
ւտրական գերակշռութեան շրջանը: Պետերբուր-
գում ամենամեծ Տոլմապոլսկի վայելում է
երկաթուղու նախագիծը Պարսկաստանի վրայով
Միջուցի դէպի Կասպից ծովը մինչև Չախար,
Հնդկական ովկիանոսում, Բելուշիստանի սահմա-
նի մօտ: Դիւր պէտք է գնայ Թէհրանի, Սպահա-
նի, Նզդի և Քիրմանի վրայով, այնպէս որ նրա
երկաթուղիները կը լինի մօտ 1200 մղոն: «Ta-
geblatt» լրագիրը ապացուցանում է, որ Ռու-
սաստանի առաջ գնալը դէպի Հնդկական ովկիա-
նոսը ոչ թէ անխուսափելի է, այլև, բացի դը-
րանից, ցանկալի էլ է Գերմանիայի և Անգլիա-
յի համար, որովհետև այդ բանը կապում է այդ
պետութիւններին Ռուսաստանի միջամտութիւ-
նից Փոքր-Ասիայում և Հնդկաստանում:

ՆԱՍՏԱԿ ԹԻՐԻԳՐԱՅԻՑ

Վան, մայիսի 10-ին
Նախապէս գրած էինք արդէն տեղւոյս երկ-
րագործական տենդոտ գործունէութեան մասին,
որ, բաղդատաբար նախորդ տարիներու, այս
տարի չափէն աւելի եղած էր մյն պատճառաւ,
որ մէկ կողմէն՝ երկրագործական բանկն օգնեց,
միւս կողմէն՝ արդող ազատութիւններն և խաղաղ
գրութիւններն խրախուսված, բաղդացիներէն ալ
անհատական ձեռնարկներ եղան գիւղացոց հետ
ընկերակցութեամբ ցանք ընելու. ու երրորդ
կողմէն, որ ամենէն աւելի դորաւոր պատճառն
է, կաթողիկոսներու բաժնած սերմն էր, որը գե-
րազանցելու համար բողոքականները մրցումի և-
լան ու անոնց եռապատիկը սերմ տուին գիւ-
ղացոց՝ ազգային առաջնորդարանի հետ համա-
կամ ու համախորհուրդ: Սակայն քիչ մնաց, որ
այդ ամենը ի դուր երկրորդ, ու միմիայն հացով
աղբաւ կամ բարեկեցիկ ապրող այս ժողովրդի
այսերն ու յոյզերը յօսն ցնդէին:

Յայտնի է արդէն, որ այս տարի գրեթէ ձմեռ
չունեցանք հոս. ձիւնն ալ, հետեւաբար շատ քիչ
ըլլալուն համար, չուտով հալեցաւ. դեռն ու ջրի
պակասութիւնը այժմիս սկսեց նեղել գլմեր:
Այսքան ջրաւէտ համալուծած երկրի մը ջուրէն
նեղուիլը անհաւատալի թուի գուցէ, բայց ճշը-
մարտութիւն մըն է, քանի որ ահազին ջուրեր
ունինք, որը անպէտ է կը դուրսին՝ ժողովրդեան
անկարողութեան և կառավարութեան անուշա-
ղիւր թողնելուն պատճառաւ:

Մինչդեռ ցանքերն ընելէ վերջ անձրեւի մը
կը սպասէինք, որպէս զի աճեն ու բուսնան ա-
նոնք՝ ընդհակառակ երկինքը պղնձացած ու
ցածրած, կաթիլ մը ևս զրանք մեկի. ու յու-
սահատութիւնը, դեռն ու սարսափելի կերպով
սկսաւ կարգադրիլ ամբողջ աղքատ դասակար-

գին դիմագծերուն վրա, սկսաւ կրծել, մաշել ա-
նոնց ներսի դին: Սովի երկիւղ մըն էր ան բա-
ցարձակապէս Այդ առթիւ, կուսակալի հրամա-
նով, հայ և թուրք կղերները անցեալ չարթու-
քանի մը անգամներ աղօթքներ կատարեցին
դաշտին մէջ, ի ներկայութեան կուսակալին,
պաշտօնեաներուն և ժողովրդեան, որպէս զի
Աստուծո սիրտը բաղդանայ, անձրեւ գայ: Ի դուրս
երկրէ երեսը երեցած կտոր մը ամպերն ալ
փախան-դնացին:

Այդ կրօնական փորձերէն, յուսահատութիւն-
ներէն յետոյ, վերջապէս Աստուածը գլծաց, բը-
նութեան սիրտը բաղդացաւ ու երկներն դռնե-
րը բացվեցան: Անցած շաբթու փրկաւէտ անձ-
րեւ չղաց, ոյժ և հասակ պարգեկելով բոյսերուն,
յոյս և կեանք չնորհելով թշուառ ժողովրդին. ու
անկէ ի վեր, 1—2 օրն անգամ քանի մը պոտ
կը կաթէ վրանիս, միշտ լծաց պահելու համար
գետնը: Եթէ մինչև յուլիս երկու անգամ ալ
լաւ անձրեւ գալու ըլլայ, մեծ յոյս ունինք, որ
այս անգամ հացը շատ առատ և աժան պիտի
ըլլայ: Հետեւաբար գիւղացին, որ ձմեռը նպաս-
տով, իսկ գարնան բացուելուն կանաչեղէնով
կապրի ու պիտի ապրի մինչև կայրցին, յուսալի
է, որ կարողանայ կտոր մը հաց ուտել, քիչի մը
չունչ առնել՝ հակառակ կարգ մը թղթակցիցնե-
րու լալկան և յուստես ողբերուն:

Հանդուցեալ Գրիգոր Արքեպիսկոպի իր գորեղ
գրիչով, Թրիմեանը ժամանակին իր աղու ըսա-
րդով, շատ դժբաղած էին տաճկահայոց գաղթա-
կանութեան խնդրով, ու ամենէն ալ հակառակ
կարծիք յայտնած են, շնատակար համարելով այդ
հայ ժողովրդեան համար: Սակայն երբ Տաճկա-
նայտանը այն դժբաղդ օրերէն ի վեր արեւել-
ծութեան լիաւոր եղաւ, ու ժողովուրդը իր բնիկ
երկրին մէջ էր կրնար չախաւիլ ու ապրիլ՝
գաղթականութիւնը անհրաժեշտ հարկ մը եղաւ.
ու կը մնար: Պանդուխտներու կենտրոնը Պոլսն
էր, իբր ամեն կերպով յարմար տեղ և աշխա-
տելու և դրած չահելու: Սակայն 96-ր բանկի
դրաման դէպքին իբր հետեւեց, 50,000-էն ա-
ւելի պանդուխտ հայեր, իրենց գործերէն ու
վատասկէն ձգալուոր եղան, ոմանք հայրենիքէն
աքորդելով և ոմանք ալ արտասահման ապա-
ւելելով: Ու կողպուտած, աղքատացած հայ
ժողովուրդը դրկուած էր ապրելու աղբիւրէն,
քանի որ ալ գաւառացի հային արգելուած էր
Պոլսի մտնելու՝ իբր խռովութեան ամենէն աւե-
րի նպատակը տարրի:

Պոլսոյ դեսպանատանց պահանջներուն և Ա-
նատոլիի կուսակալներու խնդիրներէ վրա, վեր-
ջապէս կառավարութիւնը տեղի տուաւ, ու
չարթուս Բ. Գաւէն հեռագրվեցաւ թէ անշնաս
հայերը կարող են Պոլսի երթալ աշխատելու:
Այս լուրը մեծ ուրախութիւն պատճառեց ժո-
ղովրդեան, և չափեր կը պատրաստվին Պոլսի
մեկնելու: Թորէն—Ա.

ՆԱՍՏԱԿ ԳԻՐԲԱՆԻՍՏԻՑ

Բերլին, մայիսի 17-ին
Նորից Բերլինի համալսարանի փիլիսոփայու-
թեան բաժնի երաժշտական գիտութիւնների
պրոֆէսոր Օսկար Ֆլայշէր: Նախաձեռնութեամբ
կազմակերպվեց մի «Երաժշտական միջազգային
ընկերութիւն», որն ունի իւրաքանչիւր երաժշ-
տական մեծ և փոքր կենտրոններում ճիւղաւո-
րութիւններ: Այս ընկերութեան մասնակցում
են բոլոր պետութիւնների երաժշտագէտները:
«Երաժշտական միջազգային ընկերութեան
նպատակն է՝ ծառայել երաժշտագիտական ու-
սումանքութեան, նրա կուլտուրական զարգա-
ցումն ընդհանրութեան ծանօթացնել, գեղա-
բուստն ու գիտութիւնը ընդհանրապէս և երա-
ժշտագիտութիւնը մասնաւորապէս ընդհանուր
ոյժով զարգացնել և կարծիքները ու գաղափար-
ները փոխանակութիւնը գիւրացնել:

Կարճ ժամանակամիջոցում ընկերութիւնը
հաստատ հիմքերի վրա կանգնեց. այժմ սա մի
գործող, զօրեղ մարմին է: Ընկերութիւնն ունի
երկու հրատարակութիւն, «Ամսաթիւր» և «Ե-
ռասմանայ հաւաքածո», որոնց անդամները հա-
մար լոյս կը տանէ օգտուորի սկզբնէ, առաջի-
նը իբր տեղեկատու երաժշտական դանադան
երկրի մասին, երկրորդը՝ զուտ գիտական ե-
րաժշտական եռամսեայ հաւաքածո: Բերլինի
ճիւղն ունի արդէն մօտ քառասուն անդամ, ո-
րոնց թիւում է իբրեւ հայկական երաժշտութեան
ներկայացուցիչ՝ Կոմիտաս վարդապետը (սովոր-
ւում է, ի հաշիւ պ. Մանթաշեանի, երաժշտու-
թիւն և այս տարի աւարտելով իր ուսումը՝
սեպտեմբերին վերադառնալու է Ելլիթիւն):

Բերլինի ճիւղն ունենում է կանոնաւոր նիս-
րեք ամիսը մի անգամ և անկախ կազմակեր-
պութիւն ունի, ինչպէս և միւս ճիւղերը: Նա-
խագահութեամբ պրոֆէսոր Ֆլայշէր՝ երրորդ

ժողովը կայացաւ մայիսի 10-ին (ն. տ.), երեկոյան ժամի 8-ին. այդտեղ Կոմիտաս վարդապետը գերմաներէն լեզուով կարդաց իր ընդարձակ ուսումնասիրութիւնը «Հայոց եկեղեցական և աշխարհիկ երաժշտութեան մասին», որը մի և նոյն ժամանակ ընկերութեան առաջին դասախոսութիւնն էր: Ժողովին ներկայ էին թէ անդամները և թէ համալսարանից ու կոնսերվատորիաներէնց հրաւիրված պրոֆէսորներ և դոկտորներ:

Նախագահը մի քանի խօսքով յայտնեց ներկայ եղողներին ժողովի նպատակը և խնդրեց դասախոսութիւնն սկսել: Կոմիտաս վարդապետը կարդաց իր ուսումնասիրութիւնը և գործնականապէս բացատրեց հայոց երաժշտութեան կազմութիւնը հետեւեալ ծրագրով.—ընդհանրապէս հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտութեան պատմական ծագումը. հայոց երաժշտութիւնը, իբրև ինքնուրոյն և անկախ երաժշտութիւն.—համեմատութիւն միւս արեւելեան ազգերի եղանակների հետ.—հայոց երաժշտութեան արդի դրութիւնը.—եկեղեցական եղանակների կազմութիւնը՝ բոլոր մանրամասնութիւններով. — ժողովրդական եղանակների կազմութիւնը և եկեղեցական եղանակների հետ ունեցած առնչութիւնը.—մի քանի խօսք հայոց հին երաժշտական խաղերի մասին.—այսմեան ձայնախնդրի դրութիւնը:

Կասախոսութիւնը մեծ հետաքրքրութիւն պատճառեց օտարազգի երաժշտագէտներին. լսելով հայոց թէ եկեղեցական և թէ ժողովրդական դրոշմային եղանակները իրանց նազդոյն պարզութեամբ և կազմութեամբ՝ հիացան և խնդրեցին հ. Կոմիտասին կարդալ նոյնը երկրորդ անգամ աւելի մեծ հասարակութեան առաջ՝ հրապարակով: Թէ և հրաւիրված էին եղել վախճանի չափ մարդիկ, բայց սաստիկ անձրևի պատճառով կէսն էին եկել:

Երկրորդ անգամ՝ դասախոսութեան վերաբերեալ օրինակները քառաձայն երգելու է կօնսերվատորիայի խումբը, որի նախապատրաստութիւնը յանձն է առել ինքն հ. Կոմիտաս:

Կասախոսութեան վերջում նախագահը ժողովի կողմից շնորհակալութիւն յայտնեց և ջերմագին հ. Կոմիտասի ձեռքը սեղմեց՝ ասելով. «Ինչպէս ձեր ուսումնասիրութիւնը ինձ տաք, որ ընկերութեան «Նուստմայ հաւաքածուի մէջ հրատարակեմք», իսկ անդամներից մէկը՝ դոկտոր Զայֆերտ, փոխը մատուցեց:

Խ. Խոսրովեանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Hamb. Nachr.» լրագիրը բերում է Պարսկաստանում քան տարի ապրած մի եւրոպացու մասնաւոր նաւակից մանրամասնութիւններ՝ այնտեղ տիրող անտանիկ զրօքի մասին: Ըստ Շահը համարեա արդէն երեք տարի թագաւորում է, բայց նա գտնվում է իր սիրած մի քանի մարդկանց ձեռքում և ամենին տեղեկութիւն չունի երկրի դրութեան մասին: Այդ պատճառով երկրի մէջ միայն կողոպտումն է տիրում: Զօրքը ունի չէ ստանում: Ուսուցիչները, պաշտօնեաները և ուրիշները արդէն երեք տարի է փող չեն ստանում, բայց հար չունեն գանգաւորելու, և եթէ պատահմամբ ունի են ստանում, ունի կէսը ստիպված են թողնել բարձրատիման պաշտօնեաների գլուխները: Իսկ վերաբերում է եւրոպացիների հետ վարկերու, դեպիպատաների բողոքները առայժմ դեռ օգնում են: Ժողովուրդը ցանկանում է, որ կատարվի Պետրոս Մեծի կտակը, որով Կասպից ծովը պէտք է ուսուցանեք ընդ ծով դառնայ: Սրբ կը լինի, որ ուսուցները դառնան հրաւիր, գոհացնեն մեզ, ոչ ուսուց եւրոպացիներին և մի կերպ կարգ հաստատեն այստեղ:

—«Frankfurter Zeitung» լրագիրը ստացած տեղեկութիւնների համեմատ, սուլթանը հայոց պատրիարքարանի քարտուղար Տիրան Քէլեկեանին Հալապ ուղարկեց, դիմադրելու հայերի և երկաւասար թիւերի դիտարկութիւններին, որոնք ցանկանում են մի յիշատակագիր ներկայացնել իսկադրութեան կօնֆէրենցիային:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԻՌԻՍՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

20 մայիսի

ՆՕՎ.Ս.ՍԱՐԳՍԻԱՆ: Իշանի ուսուց զօրքի վրա յարձակելու տարեդարձի օրը տեղի ունեցաւ: Անդիմանում կողորոված զինուորների համար փառաւոր արձանի և այն եկեղեցու հիմնադրութիւնը ուսուց գիւղում, որը շինված է այն գիւղի տեղում, որտեղ ապրում էր Իշան:

ՊԱՐԻՑ: Փրէշակիւն դատարան: Լօմբար, հարակիցութեան դժգոհութիւնների հետ, բողոքում է այն խօսքերի դէմ, որ ասաց գնեկալ Երվէ և յայտնում է, որ զօրքը, լինելով զօրեղ իր պարսաճանալութեամբ, միշտ կարող է հաւատ և յարգանք ներշնչել բոլորին և ամեն մէ-

կին: Լօմբար ցաւում է, որ Բօրէպէր այնպիսի փաստեք հաղորդեց, որոնք նրան յայտնի էին որպէս դատաստանական դատակարարի անդամին: Փաստաբան Փալատեֆ պաշտպանում է Դերուլէյին և պատմում է նրա կենսագրութիւնը:

ՊԱՐԻՑ: Դատարանում: Դերուլէյի գործի առիթով Փալատեֆ առաջարկեց արդարացիել Դերուլէյին: Դերուլէյը և Դաբեր յայտնեցին, թէ չեն ընդունի ազատութիւնը, եթէ երկուսն էլ արդար չը ձանաղկեն: Դատարանը երկուսին էլ արդարացեց: Նախագահը հրամայեց մեղադրեալներին ազատել: Ամբողջ թափվեց սեղաններէ վրա, գոռալով. «Կեցցէ Դերուլէյը, կեցցեն երկուսները»: և երգելով մարտէլէն: Երջապատելով Դերուլէյին և Դաբերին, բոլորն էլ սեղմում են նրանց ձեռքերը: Դերուլէյը շնորհակալութիւն է յայտնում և հեռանում է, ձայն տալով ի պատիւ երդուեալների:

ՊԱՐԻՑ: Երվէ յանձնում է Կրանցին մի նամակ, որի մէջ նա կրկնում է այն խօսքերը, որ նա ասել է դատարանում Դերուլէյի գործի ընտելութեան ժամանակ: Նա յայտնում է, որ բոլորովին մտադրութիւն չէ ունեցել ակնարկելու Կրանցի քաղաքականութեան վրա: Կարծում են, որ միջնադէպը վերջացած է:

Դերուլէյը դատարանից դուրս գալու միջոցին՝ ամբողջ ծափահարեց: Այ մի լուրջ դէպք տեղի չունեցաւ: Դերուլէյը դնաց «ազգասէրների լի-դան» և հրաւիրեց իր բարեկամներին երեկոյան նշտուի:

ՊԱՐԻՑ: Բուրբոնեան պալատի կօրնօրներում Լալօթի յայտնեց, որ հարցապնդում պէտք է անէ գնեկալ Երվէի ցուցմունքների առիթով: Նա ասում է, որ տեղեկութիւններ ունի այն հետեւանքների մասին, որ կառավարութիւնը մըտադիր է տալ այդ միջնադէպերին: Կրանցի չըբջապատողները գաղտնի են պահում այն ամենը, ինչ որ պատահել է Կրանցի և Երվէի տեսակցութեան միջոցին: Մի քանիք ասում են, որ Կրանց պատգամաւորների ժողովում կը պահանջէ անմիջապէս քննել գործը և կը ներկայացնէ իր ցուցմունքը պատճէնը, որի պատասխանատւութիւնը Երվէ յանձն է առնում, և որը դա-նապանվում է առաջին օրինակից: Կրանց կը յայտնէ, թէ կը ստիպէ, որ ամենը յարգեն կառավարութիւնը, և կը հարցնէ պատգամաւորների ժողովին, թէ արդեք վստահութեամբ է նայում նա այդ բանի իրազօրման վրա: Հաւատացնում են, որ Երվէ, Կրանցին իր սուած յայտարարութեան մէջ, ասել է, որ նա մտադիր է եղել խօսել Դերուլէյի մասին, իբրև մի բանաստեղծ-դիտարկ, առանց որ և է քաղաքական կողմնակի նպատակի: Այժմ խօսակցութեան առարկաներն են միայն Երվէի հետ պատահած դէպքը և Մարշանի գալուստը: Կենտրօնի ու ձախկողմեան պատգամաւորները աստ ցաւում են Մարշանի արտասանած ձախառնութիւնը: Մարշանի բարեկամներից շատերը հրաժարվել են դիմաւորելու նրան երկաթուղու կայարանում՝ այսօր առաւօտեան լրագրներում հրատարակված հեռագիրների պատճառով:

ՊԱՐԻՑ: Սենատի հանրապետական երեք խմբերի նախագահները դիմեցին Դիւպլի-լին այն հարցով.—թէ արդեք ճիշդ են գնեկալ Երվէին լրագրների վերաբրած խօսքերը, և այդ դէպքում Դիւպլի-լին միջոցներ մտադրութիւն ունի ձեռք առնելու: Դիւպլի-լի պատասխանեց, թէ ինքն պակաս յուզված չէր դատարանում պատահած միջնադէպը լրագրներից կարգալով և որ ինքն ճշդօրէն կրկնայ թէ ինչ է պատահել: Մի-նիստը խնդրեց նրանց հաւատարմած լինել, թէ ինքն հարկաւոր դէպքում միջոցներ ձեռք կառնէ:

ՊԱՐԻՑ: Դերեֆուսի գործը: Մանօ յիշեցնում է Անրիի և Էստէրնայի մէջ տեղի ունեցած տեսարանները Բէրտուլօսի առանձնատանեա-կում և ապա խօսում է այն բանի մասին, որ ինքն անուանում է Դերեֆուսի խոստովանու-թեան լեզնդա: Նա ասում է, որ Լէրէն-Բէնօ շատ պատուելի օֆիցէր է, բայց շատ տպաւոր-վող և ոգևորվող: Մանօ աշխատում է ապացուցանել թէ անհաւանական է, որ Դերեֆուս խոստովանութիւններ արած լինի, նա, որ միշտ պնդում էր իր անմեղութեան վրա, և պախարակում է Կալմենակին այն բանի համար, որ նա պնդում էր Դերեֆուսի խոստովանութիւնների վրա: Մա-նօ իրան իրաւունք է համարում ասելու, թէ այդ խոստովանութիւնները երբէք զոյգութիւն չեն աւ-նեցել: (Մափահարութիւններ): Մանօ գովաբա-նում է Դերեֆուսի ընտելութիւնը, և ասում է, թէ նա արժանի է, որ վերաբնութեան դռնե-րը լայն կերպով բացվեն նրա առջև: Պրօկուր-ը վերջն ասում է, որ հրաժարվում է հաւա-տայ, թէ դատարանը կարող է մերժել այդ վեր-ջին ներողամտութիւնը, որ ինքը, Մանօ պա-

հանդում է նրա համար: «Ամբողջ երկիրը, ամբողջ աշխարհը, ամբողջ պատմութիւնը,—ասում է Մանօ,—պատահեց նա դատաւիճախի Յաննա առ-նեք, ուրեմն, նրանց առաջ, որպէս և դատա-րանի առաջ, պատասխանատուութիւն մեր եղ-րակացութիւնների համար այն անդորրութեամբ, որ տալիս է կատարած պարտականութիւնը: Այդ եղբակացութիւնները,—մենք այդ հաստա-տում ենք,—հիմնված են Դերեֆուսի անմեղու-թիւնը ապացուցանող մի բանի նոր փաստերի վրա: Եւ թող, այդ պատճառով, բարեհաճէ դա-տարանը բեկանել 1894 թվի դեկտեմբերի 22-ի դատաւիճիւրը և երկարեղ Դերեֆուսին, որպէս մեղադրվողի, այնպիսի զինուորական դատարանին, որպիսին իրան հաճելի էր լինի նշանակել: (Բու-ւրն ծափահարութիւններ): Նիստը փակվեց:

ՏՈՒԼՕՆ: Մարշանի միստիան այստեղից ճա-նապարհ ընկաւ երեկոյան 6 ժամին: Սենեգալ-ցիները յուսահատված են, որ չեն կարող ու-ղեկեցել Մարշանին:

ՄԱՐՍԵԼ: Ահադին ամբողջ ոգևորված կեր-պով դիմաւորեց Մարշանին: Բաղաբացիական և զինուորական իշխանութիւնները ճաշ տուցին ի պատիւ Մարշանի և կենացների մէջ փաստա-բանում էին փոքրիկ զօրաբանի հերոսութիւնը: Յուզված Մարշան շնորհակալութիւն արաւ և ցաւ յայտնեց, որ չը կարողացաւ այցելել իր ըն-կերների գերեզմանները Տիբուկտուի մէջ, նա այնտեղ պսակ ուղարկեց: Ճաշից յետոյ, Մար-շանին և նրա ընկերներին ձեռքերի վրա դուրս-բերին: Ոգևորված բացազանչութիւններ ուղեկ-ցեցին ճանապարհ ընկած գնացքը:

ՀԱՍԳԱ: Առաջին յանձնաժողովի երկու են-թայանձնաժողովները երէկ Նիստ կայաց-րին, բայց համաձայնութեան չը յանգան դի-նաւորութեան դիւտերի հարցի վերաբերմամբ: Առաջին յանձնաժողովը խմբագրական են-թայանձնաժողովը ընդունեց միջնորդութեան և միջնորդ դատարանի վերաբերեալ նախագծի առաջին վեց յօդաւանքի խմբագրութիւնը, որ նոյնպէս և երկու յօդաւանքներ: Ամերիկա-կան պատմիրականները առաջարկեցին մշտական միջնորդ դատարանի նախագիծը: Ամերիկական նախագիծը չէ պահանջում, անդիլականի նման, որ իւրաքանչիւր պետութիւն երկու անձն նը-շանակի, որոնք կը կարողանային ընտրված ի-նքն միջնորդ դատարանների կողմից, այլ որ իւ-րաքանչիւր երկրի նշանակէր մէկ մէկ միջնորդ դատարան: Միջնորդ դատարանը պէտք է մշտա-կան կենտրոնական ընդդիմացի ունենայ և պէտք է, գտնէ, կազմված լինի երեք անդամներից, ո-րոնք ծագումով չը պատկանեն երկաւասակու-թեան մէջ գտնվող երկրներից, և միշտ անդամ չը պէտք է բնակվեն այդ երկրներում: Եթէ դա-տաւիճիւրը կարողանայ յետոյ երեք ամսվայ ընթաց-քում նոր փաստեր երևան կը գտն, դատարա-նը նորից կարող է սկսել նոյն գործի ըննու-թիւնը նոյն պետութիւնների մէջ: Միջնորդ դա-տարանին վերաբերեալ դաշնագրին մասնակ-ցող պետութիւններին թողարկում է, որ ի-րանք վճռեն, թէ արդեք ցանկանում են նրանք դիմել այդ դատարանին, և դատարանը միայն այն ժամանակն է իր դատաւիճիւրը կարողում վի-ճելի հարցի վերաբերմամբ, երբ նա հաստատա-պէս գտնէ, որ վիճող կողմերը կենդակութեան իր դատաւիճիւր: Դատարանը կը հիմնվի իսկոյն այն բանից յետոյ, երբ 9 պետութիւններ, որոնցից 8 եւրոպականները, և այն էլ նրանցից 4 մաս-նակցել են Պարիզի 1856 թվի դեկլարացիայի ստորագրմանը,—կը տան այդ բանի համար ի-րանց համաձայնութիւնը: Բացի այդ նախագը-ծից, ամերիկական պատմիրականները առաջար-կեցին մի յատուկ նախագիծ միջնորդութեան մասին: Այդ նախագիծով, երկու պետութիւնների մէջ ծագած երկաւասակութիւնների դէպքում, իւ-րաքանչիւրն ընտրում է մի որ և է պետութիւն, որը պէտք է նրա համար մի տեսակ վկայ լինի և պէտք է աշխատէ հակառակորդներին հաշ-տեցնել: Եթէ բանը պատերազմին հասնի, երկու միջնորդ պետութիւնները պէտք է վկաներ լի-նեն և ամեն ջանք գործ դնեն, որպէս զի որ-քան կարելի է շուտ վերջ դրվեն թշնամական գործողութիւններին: Կարմիր Թաշի յանձնաժո-ղովը երէկվան նիստի մէջ նշանակեց ենթա-յանձնաժողով, որի նախագահ ընտրվեց Ֆիշլը, իսկ անդամներ—կապիտան Զիգէլ (Կերմանիս), կապիտան Տէյն (Ռուսաստան), և Բէնօ (Ֆը-րանսիա):

ՊԱՐԻՑ: Վճռաբեկ ատեան: Նիստը վերսկս-վելուց յետոյ, Մանօ, խօսելով 1894 թվին դա-տարաններին հաղորդած գաղտնի դոկումէնտնե-րի մասին, ասում է, որ օրինակի տեսակէ-տից այդ դոկումէնտները զոյգութիւն չունեն, որովհետեւ նրանք յայտնի չէին Դերեֆուսին: Մանօ երկար ըննութեան է ենթարկում գաղտ-նի dossier-ի դոկումէնտները, մասնաւոր Պա-

նիցարդիի հեռագիրը, և վերջում եւանդով ստո-րագծում է, որ գաղտնի dossier-ի մէջ ոչինչ բան չը կայ Դերեֆուսի դէմ, և այդ պատճառով ինքն չէ հասկանում, թէ ինչու այդպէս երկար յապարդում էին քննութեան ենթարկել նրան: (Շարժում):

ՊԱՐԻՑ: Կրէզօում գործարանական բանուոր-ները կատարելապէս դադարեցին աշխատել: Բանուորները կազմեցին զինադրութեան սին-դիկատ: Գործադուլ անողները հրափափուշո-ներ գցեցին ժանդարմների ձիերի տակ և աշ-խատում էին հրդեհել այն տեղը, ուր գտնվում էին վիւնտները: Գործարանների պաշտպանու-թեան համար զօրքեր են ուղարկված: Հաշտա-րար դատաւորը շարաթ օր հաշտեցնող ժողով է գումարում:

ՏՈՒԼՕՆ: Մովապետ Ֆուրնի «Brennus» դրա-հակիր նաւի վրա ճաշ տուց ի պատիւ Մար-շանի և նրա օֆիցէրների: Ֆուրնի գովաբանում էր այն զինուորների անձնութիւնը և անձ-նագոհութեան ոգին, որոնք կրկնված են ծովային զօրքերի դպրոցում: Մովապետը աւելացրեց, որ զինուորի փառքը կազմում է այն, որ պատե-րազմի ժամանակ նա գտնում է իր կեանքը, իսկ կուսակցութիւնների կրքերը բարբոթման ժամանակ նա գտնում է իր կարծիքները:

ՊԱՐԻՑ: Վճռաբեկ ատեան: Մանօ, յիշեցնե-լով Անրիի և Պատի-դը-Կլամի մեքենայութիւն-ները, հաստատում է, որ գաղտնի դոկումէնտ-ներից ոչ մէկը չէր կարող դիպրմատական բարդութիւններ առաջացնել, չէ մեղադրում Դերեֆուսին և չէ կարող արդիւք դառնալ վերա-ըննութեան գործին:

ՊԱՐԻՑ: Փալատեֆ աշխատում է հերքել մե-ղադրութեան փաստերը և դատապարտում է սահմանադրութիւնը և պարտմենտարիզմը, նոյնպէս և պախարակում է մի լրագրի յօդուա-ծը, որ ուղղված է գնեկալ Երվէի ցուցմունքի դէմ: Դերուլէյը, բարեկամալով, աղաղակում է. «Դա դատաւանութիւն է և տեղացում է, որ եթէ կը կամենան ուսնողները պոկել Երվէից, այդ բանը ինքն չի թոյլ տայ, և եթէ նրան ա-դատ կարձակեն, ինքն կրկին կը վարկի այն-պէս, ինչպէս առաջ էր վարվում: Հասարակու-թիւնը ծափահարում է: Օտարտի աղմուկ է բարձրանում: Նիստը դադարեցրեց:

ՊԱՐԻՑ: Վճռաբեկ ատեան: Մանօ ըննում է արդէն յայտնի արգելմէնտները, այն է, որ Էս-տէրնայի հարաւորութիւն ունէր հաղորդելու բօրքերում թլւած դոկումէնտները, ապա հարց է տալիս, արդեք դատաւանութիւն է կատար-ված, թէ ստիպված ենք գործ ունենալ մի գաղտնի միտմիջկցայի, յանդուրն խաբա-բայութեան հետ, որ արել է բօրքերի հեղինա-կը իր օտարանպատակ թղթակցի վերաբերմամբ: Դա մի սպառնալի հարց է, որը տանում է դէպի մի այլ, աւելի տխուր, այն է մի մարդու մարտիրոսութիւնը, որի անմեղութիւնը հաս-տատում են մի քանի նոր փաստեր: Ապա Մանօ խօսում է Դերեֆուսի անձնական փա-ռաւոր դրութեան մասին և հակադրում է Դերե-ֆուսի վարմունքը Էստէրնայի վարմունքին, աւելացնելով, որ եթէ չը կայ ոչ մի լուրջ պատ-ճառ, որ կարող լինի բացատրել Դերեֆուսի յանցաւորութիւնը, սակայն, ընդհակառակն, կան շատ շարժառիթներ, որոնք բացատրում են, թէ ինչու Էստէրնայի կարող էր կատարել մի այլ տեսակ յանցանք:

ՄՕՍԿՎԱ: Դուստն որոշեց Պուշկինի անուան մի թղթիկ հաստատել, տալով տարեկան 420 ռուբլի, ուսում տալու միջնակարգ և բարձրագ-րոյն դպրոցներում ուսուց գրողների սերունդ-ներին, առանց սեռի խտրութեան: Սօկոլնիկով և համալսարանական կլինիկներ ժող բացվում են «Պուշկինեան երկու տարեկան արական և իգական դպրոցներ: Ժողովրդական ընթերցա-նութիւնների յանձնաժողովը մայիսի 23-ին Պատմաիւն թանգարանում կազմում է ձրի ըն-թերցանութիւն՝ նուիրված Պուշկինի անուան:

ՄՕՍԿՎԱ: Ամսի 19-ին մարդատար գնացքի անցնելուց յետոյ՝ Կազանեան երկաթուղու դծի 107 և 108-րդ վերատերի վրա, սաստիկ քամու ժամանակ, հրդեհվեց մի մեծ վաճառաւաճ գիւղ գնաւազան տեղերից: Տները կէսից աւելին այր-վեց: Ժողովուրդը գրգռված է և սկսեց քարեր ձգել գնացքների վրա: Գնացքներին սկսեցին ու-ղեկեցել ժողապետներ:

ԿԱԶԱՆ: Աշնանացանի վիճակը անմիթարա-կան է. բացառութիւն կազմում են Զիտուպօլի և Սվեաժիկի գաւառները: Ամերից շատ են վը-նասվել Մամադլին, Սպասկի, Տարբինի և Զե-րօկուարի գաւառները, ուր դանազան պատմա-նքերից վնասվել են 42,000 զեւսիստին: Դրանցից 11,400-ը պէտք է նորից հերկվեն և ցանվեն: Իսկ մնացածները նպատաւոր հանգամանքնե-րում կարող են լաւանալ: Գարնանացանի վիճա-

